№ 50 ԹԷՀՐԱՆ ՇԱԲԱԹ 31 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1894 № 50

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

# ՇԱՒԻՂ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

„ՇԱՒԻՂԸ“ ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ՏԱՐԵԿԱՆ 50 ՀԱՄԱՐ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

«ՇԱՒԻՂԻ» Տարեկան գինն է 10 ղրան, կէս տարուանը 6 ղրան. առանձին համարները 5 շահի. արտասահմանում տարեկան 8 ֆրանկ կամ 3 րուբլի կէս տարուանը 5 ֆր. կամ 2 րուբլի: Թէհրանում գրւում են միմիայն խմբագրատան մէջ: Մեր հասցէն. Téhéran Rédaction CHAVIGH

«ՇԱՒԻՂԻ» խմբագրութիւնը բաց է առաւօտեան 8—4 ժամ: Կիւրակէ եւ տօն օրերը 10—2 ժամ: Յայտարարութիւն ընդունւում է ամեն լեզուով: Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 1 շահի:

## ԲԱՑՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ 1895 Թ.

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ „ՇԱՒԻՂ“ ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

„Շաւիղը“ կը հրատարակուի Թէհրանում (մօտաւորապէս կրկին մեծութեամբ) նոյն ծրագրով և նոյն ուղղութեամբ: „Շաւիղի“ բաժանորդագինն է մէկ թուման, կէս տարուանը վեց ղրան: Արտասահմանում՝ 3 րուբլի կամ 8 ֆրանկ. կէս տարուանը 2 րուբլի կամ 4 ֆրանկ:

Արտասահմանից դրամական ծրարները կարող են ուղարկել հետեւեալ հասցէով. Черезъ Баку Россійской ИМПЕРАТОРСКОЙ Миссіи въ Тегеранѣ пер. А. Бэкъ-Назарову. Իսկ նամակներ և թղթակցութիւններ հետեւեալ հասցէով, Téhéran, Rédaction „CHAVIGH“.

Փարիզում ցանկացողները կարող են գրուել Բաղդասար Մելիք Սարգսեանցի մօտ, Սալմաստում Յովհաննէս Ալբէսանցի մօտ, Արտաբիլում՝ Յակոբ Էլչիբէկեանի մօտ, Նոր-Ջուղայում Յովսէփ Բարսեղեանցի մօտ, Բուշիրում պ. Կ. Զէյթունեանի մօտ, Մարաղայում Մելքոն Խալաթեանցի մօտ Ռաշտում՝ Ալէքսան Յովսեփեանցի մօտ:

Ապառիկ բաժանորդագրութիւն չէ ընդունւում:

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Այրող հարցեր.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Մասնաւոր և հասարակական կրթութիւն Նամակ Դավրէժից. Ուրմիոյ հայերը. Նամակներ խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլի Տեսութիւն. Արտաքին լուրեր.—ՖԵԼԻԵՏՕՆ

## ԱՅՐՈՂ ՀԱՐՑԵՐ

Այսօր լրանում է ամբողջ մէկ տարի ինչ „Շաւիղը“ բարեբախտութիւն կամ դժբախտութիւն է ունեցել ի շարս այլ թերթերի, ասպարէզ դուրս գալ, հանդիպելով երբեմն նպաստաւոր, բայց շարունակ աննպաստ հանգամանքների, քաջալերուելով երբեմն հեռաւոր ազգակիցներից և ընդհանրապէս արժանացած տեղական հասարակութեան պարսաւանքին և ատելութեան:

Հարցնում ենք, ինչ մեղաւոր է թերթը կամ ինչ մեղաւոր են նորա մէջի գրողները: Շատ ցաւում ենք, որ թերթը կոչուած չէր երբէք խունկ մատուցանելու, ներբողներ կարդալու:

Նորա աշխատակիցներն էլ կարծես բաղդի բերմամբ կոչուած լինէին նոյն ուղղութեանը ծառայելու, առանց ո և է շահադիտական կամ այլ նպատակի նկատի ունենալու:

Փառք Աստուծոյ, այս տարի հակառակ ամեն վայնասունների, թերթը ամենավտանգաւոր բովերից անցնելով, հազիւ կարողացաւ անվնաս դուրս պրծնել... Հարց է թէ հասարակական խնդիրներն էլ այդքան հեշտութեամբ կարողացան անվնաս դուրս պրծնել:

Թէ ինչ ենք արել մենք—դորա մասին մանրամասն խօսելը թողնում ենք յաջորդ թուին, իսկ այս անգամ մի ընդհանուր բայց կարճառօտ ակնարկ ձգելով Թէհրանում այս տարի կատարուած իրողութիւնների վերայ, փակում ենք „Շաւիղի“ էջերը հին տարուայ համար, դնելով մի քանի ակներև բայց կնճռոտ հարցեր հրապարակի վերայ, և սպասելով նոր տարուան, որի ընթացքում լուծում պիտի գտնեն նրանք:

Մի հարց որ սաստիկ յեղյեղւում էր 3—4 տարիներից ի վեր. տեղային կուսակցական հարցն էր: Այս տարի լրագրութեան շնորհիւ այդ հարցը կլէտ-

## ՖԵԼԻԵՏՕՆ

Մինչև այժմ լռելու պատճառը:—Ուզում եմ արդարանալ:—Կեանքս ապահովեցնելու միտքս:— Սուքիաս ամին:—Իմ ընծաները:

—

„Ինչու այդպէս շուտ դադրեցիք ֆելիետոն գրելուց“ դիմում են ինձ ընթերցողներից մի քանիսը հետաքրքրութեամբ. «անպատճառ մի յարգելի պատճառ կունենաք, աւելացնում են նրանք, չենք կարծում թէ այդպէս շուտով հրաժարուէիք ֆելիետոն գրելուց:»

—„Բոլորովին իրաւացի, պատասխանում եմ ես: Ինչպէս սպասելի էր, իմ առաջին ֆելիետոնս թէհրանցիներից շատերի քէֆին դիպել էր:

—Ինչպէս յանդգնել էք, ասում են ինձ այդ մարդիկ զայրացած, խախտել մեր հնաւանդ սովորութիւնները.

—„Բայց ախար ինչով, չի կարելի արդեօք իմանալ, հարցնում եմ զարմացած“:

—«Ինչպէս, իբրև թէ չը գիտէք, մենք պապերից տատերից լսել եւ փոքրուց աչք բաց անելով տեսել ենք, որ էշերի վզից զանգուլակ կախ կանեն իսկ դուք ձեր ֆելիետոնում *) էշի վզից տախտակ էք կախ անում, այն էլ վրան գրած «ազգային գործեր», որով կամենում էք անպատուած լինել, երևի, Թէհրանցի պատուաւոր ազգային գործիչներին:

—Բարեկամներ, ես բոլորովին մտադիր չեմ եղել խախտել ձեր հնաւանդ սովորութիւնները, եւ ոչ անպատուել որևէ պատուաւոր գործչի, մի բանում միայն ինձ իրաւունք ունիք մեղադրել, այն է, որ մի այլաբանութիւն գրելով, մոռացել եմ տակը մեկնութիւն եւս գրել, որ դուք հասկանայիք. ես ուզում էի ասել. «մեր ազգային գործերը նման են կամակոր էշի, որին եթէ բզող չը լինի, առաջ չի երթայ: Այժմ կարծեմ այլ ևս ոչինչ չունիք իմ դէմ:

—Ինչպէս թէ ոչինչ. այն ժամանակ միայն ոչինչ չենք ունենայ ասելու, երբ կամ բոլորովին կը թողնէք ֆելիետոն գրելը եւ կամ խօսք կը տաք գրելիս ոչ մի պատուաւոր (բառ ռամկականին «աղա») մարդկանց քէֆին չդիպչել, ապա թէ ոչ...., այստեղ նոքա խորհրդաւոր ակնարկ ձգեցին իրանց ծառաների վերայ, որոնք մի մի դագանակ ձեռքներին, հլու սպասում էին տէրերի հրամանին:

Հրամանները շատ ծանր էին. մտածեցի մտածեցի եւ վճռեցի դիմել «կեանքը փորձանքներից ապահովող ընկերութեան», ապահովացնել կեանքս եւ դարձեալ շարունակել ֆելիետոններս:

Այդ էր ահա պատճառը, որ այս անգամ ֆելիետոնս այսքան ուշացաւ, որի համար եւ բարեկամ ընթերցողի ներողութիւնն եմ խնդրում:

*) «Շաւիղ» № 44

խմբերը քայլում են միշտ դէպի առաջ, թողնելով իրանց ետևից հնացած բարքեր, սովորութիւններ, որոնք մեռնում են և անպէտք դառնում:

Թէ որպիսի դժուարութեամբ կամ յամր ընթացքով է, որ անհատը կամ հասարակութիւնը բաժանւում է իւր մէջ արմատ բռնած յատկութիւններից, դա ակներև է:

Մինչև որ միջավայրն ու գոյութեան հարցը մի օրգանի ձև է փոխում և պատշաճեցնում կեանքի և ժամանակի նոր պայմաններին, անցնում են դարեր, միմիանց են յաջորդում սերունդներ և ֆազեր (phase), կլանում են զոհեր...

Մինչև որ արմատացած մի սովորութիւն, բարոյական մի և է օրէնք, նոյն իսկ հաւատալիք, ճանաչւում է որպէս անպէտք և վնասակար կեանքի նոր դրութեան՝ անցնում է երկար ժամանակ և ընկնում են մեծամեծ զոհեր:

Պատմութիւնից առնուած մի օրինակ կը պարզէ մեր ասածը:

Յունաստանի քաղաքակրթութեան պատմութիւնը մեզ ցոյց է տալիս, որ աշխարհագրական գիւտերը, երկրի սահմանների ընդլայնումը, վերջապէս յոնիական փիլիսոփայութիւնը՝ միմիանց ետևից հարուած տուին նախնի հաւատալիքներին: Երբ նրանք իրանց նաւերով սկսեցին ծանօթանալ Սև ծովի ափերի վերայ գտնուող երկրների կամ Միջերկրականի ցամաքների հետ, խախտուեցին նրանց մէջ այն հաւատալիքները որ իբր թէ այդ երկիրները լիքն էին հրէշներով, կիկլոպներով, հսկաներով... իսկ երբ հեռուելով փիւնիկեցւոց, նրանք անցան Հերքիւլէսեան սների միւս կողմը և մտան ովկիանոս, այն ժամանակ լիովին ոչնչութեան մատնուեց կրօնի հաւատալիքներից այն կտորը, որ իբր թէ երկիրը մի տափարակ է, շրջապատուած ովկիանոսով ևն.

Մակեդոնական պատերազմը բաց արեց յոյների առջև նոր աշխարհներ, նոր մարդիկ, նոր կեանք, որոնց հետ և նըրանք շփուեցին, որոնց բարքերից և սովորութիւններից նրանք ազդուեցին:

Այդ բոլորի վերայ աւելացաւ յոնիական փիլիսոփայութեան կասկածն էլ, որի շնորհիւ „ազգային ոգին սկսում էր ամօթ կրել առասպելներից, որոնց հաւատում էր նա իր տղայութեան ժամանակ" *):

Բայց, մինչև որ յոյները անցկացրին այն փազը, որ կոչւում է „կասկածի փազ", նրանք շատ զոհեր—և մեծ զոհեր—տուին:

Անաքսիգորը մահուան է դատապարտւում աստուածների դէմ խօսելու համար, և հազիւ ազատւում է մահուանից, միայն թէ յաւիտենականապէս աքսորւում: Էօքիլը քարկոծութիւնից հազիւ ազատուեց, որովհետև հայհոյել էր աստուածներին. Սոկրատը դատուեց և ստիպուեց թոյն խմել: Կոյր ամբոխը պահանջում էր իսկոյն պատժել այն մարդուն, որ, նրա կարծիքով, անհաւատ էր որովհետև ամբոխի կարծիքով հնութիւնն ու աւանդութիւններ մերժիլը կը նշանակի լինել անհաւատ եւ պատժի արժանի:

Բայց բոլոր այդ դատապարտութիւնները և այլն չը կարողացան արգիլել յունական բոլոր հնութիւնների, աստուածների ենախապաշարումների փշրուելուն:

Քրիստոնէութեան սկզբից շատ առաջ դեռ, հէնց բուն Յունաստանում, կռապաշտութիւնը ընկած էր, և Հռոմում նա տուաւ իւր վերջին շունչը:

Յունաստանի մտածման ձևի վերայ այդպէս ազդեցութիւն գործողները, նորան իւր հին անմիտ հաւատալիքներից հանողները և նորան մի քաղաքակիրթ ազգ շինողները եղան քննադատական ոգին, կասկածը և բնագիտական ուսումը:

Բայց նախ քան մի հնութեան փշրուելը, մի անմտութեան ոչնչացումը, երևւան է գալիս մի փազ, որին կոչել կարելի է „կեղծաւորութեան փազ":

Թէ անհատի զարգացման և թէ հասարակութեան ընթացքում լինում են այդ փազերը:

Մտածող անհատը, երբ հասնում է այն դրութեան, որ սկսում է կասկածել իւր ընթացքի ճշգութեան մասին, նշմարում է շուրջն եղող և կամ իւր մէջ բոյն դրած կեղտը... վախենում է իսկոյն ազատուիլ նորանցից, նա ստիպւում է կեղծել, արտաքուստ հաւանութիւն տալ այն բոլոր սուտութիւններին, որոնց նա ներքուստ՝ առողջ դատողութեամբ, մերժում է:

Մարդու մէջ գոյանում է այդպիսով երկու անձնաւորութիւն, կեղծ և ճիշդ, բայց որովհետև նա միշտ կեղծւում է և երբէք ճիշդ չէ վարւում, նա վարժւում է կեղծութեան. միջավայրն ու հանգամանքն երի զօրութիւնը ճնշում են ... միացնում նրա մէջ կասկածի սել... նա իւր ամբո... կեղծութեան ... թեան ու կեղ...

Այդպիսի ... նում է քննու... րով զբաղուիլ ... շադիր թողնելուն, դառնում է խաբէբայ և ահա անկումը հետև... դրանց...

Այդ բոլո ը ... յամր է ... ւում, որ դէպի անկումը գլորուող անձը կարծում է թէ ոչինչ չէ պատահում իրան, անզգալապէս նա փչանում է, անըզգալապէս էլ ոչնչանում:

Երբեմն հէնց այդպիսի արտայայտելի

*) Դրէպըր. պատմ. Եւրոպ. Բաղ.

---

«Նոր-Դարին» մի անուն վերջապէս, թէկուզ «Հին-Դար»՝ «Նոր» անունովը հո հո է գնում դուցէ «Հին»ով քիչ առաջ գնայ:

—

„Աղբիւր եւ Տարազին" բոլ ոտանաւորներ, եւրոպական պատկերազարդ թերթերի հնացած կլիշէներից մի քեռ, իսկ խմբագրին էլ մի հարուստ հարսնացու, միայն թէ փողը բանկը դնելու փոխարէն՝ հարսնացուն բանկը դնէն եւ փողը իրան տան (տես դրա պատկերը 1891-ի «Տարազի» մէջ):

—

«Արձագանք»-ին՝ մի դամէլիօն, աշխատակից Հախումեանին մի նոր շապիկ—այս անգամ լիովին սեւ—իսկ թերթի խմբագրին մի նոր բանկի վարչութիւն, թէ չէ բանը բուրդ է, տպարանատէրը փող է ուզում:

—

«Մուրճին» մի անգամ եւս Փիլիպ. Վարդազարեան. ամսագիրը թող հայարտանայ. կաշեգործներից խմբագիր է արտադրում:

—

«Թատրոն», «Արաքս» եւ այլ հանդէսներին մի քիչ խղճմտանք, որ քիչ հարստահարեն ազգային գրականութիւնը:

—

«Արարատ»ին շատ քահանայ. մի շարական որ անդադար արտասանէ եւ Ա. Տ. Միքայէլեանցի աստուածաբանական յօդուածներից մի քեռ:

—

«Արմենիա»ին, Նոր տարուայ առիթով, իր № 36-ի մէջ տպուած ոտանաւորից հետեւեալ կտորը:

Գնա՛ չիտակ
Ցերկրի յատակ
Անպատակ
Դու հայկատակ

—

Հիւթը եկաւ մի քանի մեծ հաստատութիւնների:

Թիֆ. Հրատար. ընկերութեան, մի քանի „Խունխարներ" ու „Խան-Միրաններ":

Կովկ. Բարեգ. հայոց ընկերութեան՝ ուսանողներ, որոնք անպատճառ վարդապետ կամ աստուածաբան դուրս գան:

—

Բագուի մարդ. ընկերութեան մի մառան, որ իր դիզած փողերը անշարժ պահի մէջը:

—

Ներսէսեան դպրոցին զանազան Զօհրաբեաններ, Քարամեանցներ, Թիւսիկներ եւ Պռօշներ.. էլ բարվանսարայ (օրինակ մէյդանի հին, ների բարվանսարան) որ դպրոցը այնտեղ փո... այժմեան շէնքը ափսոս է:

—

Մառացանք նոր մարգարէ, Երեւանի ա... Կիւրեղ եպիսկոպոսին. ինչ տալ նրան եթէ ոչ մի ... խիյագարների տան մէջ:

—

Բոլոր եպիսկոպոսներին եւ վարդապետներին, որոնք անդադար ծծում են եւ ուտում ժողովրդի բրտինքը—մեծ ստամոքս:

Քահանաներին շատ ննջեցեալ եւ լաւ քելեխներ, իսկ տիրացուներին սեղանի մնացորդ փշրանքներ:

—

Դառնանք այժմ դէպի պարսկահայերը:

Սուրբիա ամուն (Դավրէժի առաջնորդին) դառան մարթէ փարաջա, որպէս զի իւր հօտից կասկա-

մրճակում կեանք են վարում ամբողջ հասարակութիւններ։

“Երբ մի ազգ—ասում է Դրեպերը—հասնում է այդ փազին, այն ժամանակ այդ տեսակ ընթացքը այնքան սովորական է դառնում, որ կեղծաւորութիւնը դառնում է ազգային դրութիւն„։

Եւ այսպէս, հնից՝ նոր սկզբունքների և բարքերի անցած կէտում, հասարակութեան կամ անհատի մէջ գոյանում է կեղծաւորութեան փազը։ Մի կեղտոտ, անտանելի փազ, որի ընթացքում անհատը կամ ազգը իր բնաւորութեամբ զզւանք է պատճառում։

Այդ փազը խօ մէկ կամ տաս տարի չէ տեւում. երբեմն դարերով երկար են լինում նրանք և տասնեակ սերունդներ են ապականում։

Իբր օրինակ այդպիսի ազգի իւր կեղծաւորութեան փազում, շատ լաւ և ճշգրտութեամբ կարելի է մատնանիշ անել մեր հայ ազգին և մասնաւորապէս նրա մի քանի հասարակութիւնների վերայ։

Կեղծութիւնը այնքան զգալի կերպարանքներ, այնպիսի ցած յատկութիւններ է գոյացրել այդ հասարակութեան մէջ, որ սոսկալի հալածանքներ են լարւում այն անձերի դէմ որոնք կամենում են քիչ բարձրանալ այդ փազից և հասնել հնութիւնը ոչնչացնելու և ժամանակի ոգուն հասնելու փազին։

Կեղծութեան ոգին գոյացրել է փարիսեցիներ, որոնք “ուղտերը կլանում են և մժղուկները քամում„ և որոնք “դրսից ոսկեզօծ տեսքով, ներսից դարշահոտ դիակներով լիքը գերեզմանների„ են նմանում։

Ատում են հասարակական, այրիների, թշուառների, գործաւորի և խեղճի փողեր ու մի քանի կոպէկ եկեղեցւոյ կամ քաղաքային տալով, իրանք իրանց բարեպաշտ և ազգասէր են հռչակում։

Զզուելի օրգիաների (orgie) մէջ լուսացնում են, պոռնկատներից բերած հիւանդութիւններով վարակում են ամբողջ ընտանիքներ... իսկ եթէ եղաւ մէկը որ մի աղջկայ համբոյրից, կակազ են բարձրացնում, “անբարոյականութիւն„ գոռում։

Եւ նկատուած է, որ այդպէս գոռացողները, բարոյականութեան այդ տեսակէտի վերայ շատ բծախնդիրներն են մեծ մասամբ, որոնք ամենաանբարոյական մարդիկ են։

Անգործութեան մէջ ճահճանում են, իրանց հետ ճահճացնում հասարակական գործեր, պարապիտութեամբ ճարպանում, ուրիշի քրտինքով ուռճանում... իսկ եթէ եղաւ մի միամիտը ու նրանց այդ արածը երեսին տուաւ՝ իսկոյն նրան ըմբոստ, խռովարար հռչակում...

Մատնութիւններով, ցածութիւններով լուսաւորութեան ամէն քայլ խեղդել են աշխատում, լոյսի տեղ խաւար են սփռում շուրջը, ապա աշտարակների վերայ են ելնում և բարձրի գլուխ “լուսաւորութեան պաշտպան„ տիտղոսը պահանջում...

Այս և այլ շատ այսպիսի կեղծիքներ այնքան վարակել, փչացրել են հային, որ օտար ազգը նրան նկատում է իբր այլասեռուած և ստոր մի ցեղ։ Ի՞նչ կուզէք որ անէր օրինակ մի գերմանացի, երբ իր մօտ ծառայող մի հայ գ ր հայ ազգին մատնելու իւր տիրոջ... չէ՞ որ գերմանացին իրաւունք կունենար եզրակացնելու թէ հայը գծուծ մատնիչ է, ոչ մի ազնւութիւն չունի իւր մէջ, ստրկական ոգու տէր է և մարդկային ոչ մի արժանիքի անընդունակ։

Եզրակացութիւն, որին մարդ հասնում է ակամայ, թէկուզ նա լինի շովինիստութեան (chauvinisme) չափ ազգասէր հայ։

Կեղծութիւնը հայի մէջ ջնջել է ամեն ազնիւ յատկութիւն և դրել է դրա փոխարէն յատկութիւններ, որոնք բղխել են նրա, գոյութեան կռուի դէմ դնելու, թուլութիւնից։ Այդպէս են առ հասարակ այն արարածները, որոնք չը կարողանալով խլել, մուրումեն, մուրալուց էլ ոչինչ չը շահելով, սկսում են կեղծել, շողոքորթել, քծնել. իւրայինների կեղտոտել, իրանք իրանց մաքուր երևացնելու նպատակով. զօրեղի առջև գալարուել. թոյլին անգթաբար կողոպտել. զարնող ձեռքը լզել և այդպէս, պատրաստել ստրկական յատկութիւններով մի ամբողջ հասարակութիւն։

Ճանճային աներեսութիւն փողւորների մօտ, մտաւոր լրբութիւն ինտելեգինցիայի մէջ եւ տարտիւֆական բարեպաշտութիւն թշուառների առջև—ահա գործունէութեան մի երրորդութիւն, որով փայլում են այդպիսիները։

Փշրանք ու ոսկոր հայցել ունեցողներից և որպէս իւր բերանից կտրած՝ շեփորաձայն, մի քանի փող շպրտել հասարակական գործի համար և դրա փոխարէն կամենալ այդ գործերի մէջ մտնելով շահուել նրանցից... այս բոլորը կեղծաւորութեամբ ղեկավարուող հասարակութեան յատկութիւններ են։

Ուրեմն և շատ բնական է, եթէ ճշմարտութիւնը այդպիսի հասարակութեան մէջ հալածուի չարաչար և Սոկրատները թունաւորուին ու Եօքինները քարկոծուին...

---

## ՆԱՄԱԿ ԴԱՎՐԷԺԻՑ

—

17 Դեկտ. 94

Կուսակցական կռիւները օր օրի վերայ, քանի գնում է, մեզ մօտ մեծ կերպարանք է առնում։ Երբ հետաքրքրւում է մարդ կռիւների պատճառներով

---

նամիտ Թերահաւատները նրան դոյլ չը կարծեն:

—

Հակաթոռ Այվազ վարդապետին՝ Պարսկաստանի եւ Հնդկաստանի առաջնորդական գաւազանը հայլի կամ շերեփի ձեւով, ազգային գործերից ազգային „հալւա“ *) պատրաստելու. մի զոյգ պողպատեայ բահ եւ բլուրդ ուս, սրբազանի շինածները յաջողութեամբ քանդելու համար:

—

Եսայի Սրբազանին, բոլ [illegible] Ս. [illegible] այլ կտակներ [illegible]

—

[illegible] Գլխարկներդ պահեք մէջ մի քանի Թուման ձգենք, որ հայերէն Թերթեր բերել տաք ու կարդաք:

—

Կեղկաթայի Մարդասիրական ճեմարանին, մի ուրիշ Մուրադ Էֆէնդի, եթէ չեն ցանկանալ մեր տեղւոյս ամենադէտ բարոյատէր ուսուցչին:

—

Ջուղայի հայերին՝ Պարսկաստանում «Աստղ Արեւելեան» հայ Թերթը իբրեւ երեխայրիք իրանց նուիրած հազար գիրքով եւ [illegible] բերեր Թուման [illegible]

—

[illegible] ուրիշ շատ [illegible] եւ [illegible] տարածներ:

—

[illegible]՝ մէկ քանի ջհուղներ, հասարակաց փակուլուոր մշակներ եւ ազգային հաստատութիւններ փակուած տեսնել ուզող վսեմափայլներ, գերատրիճաներ·

—

Թէհրանի կազմուելեալ Ազգ. Ուսումնասիրաց ընկ. դահ ազուրկ ատենապետին Ազգ. Հոգաբարձութեան մէջ նախագահութեան մէկ աթոռ, միայն թէ տակը ծակ:

—

Թէհրանի կազմուած. Ուսումնասիրաց ընկերութեան՝ մի քանի սրտացաւ ատենապետներ եւ վարդապետներ:

—

Թէհրանի Րաֆֆի ընկերութեան՝ յիշատակաչարչար Րաֆֆիի ուրուականը նորանց ժողովներում եւ գործերում. ցամաք ու չոր.—«Թան» լրագիրներ եւ ընծայած գրքեր՝ ծախելու:

—

Թէհրանի Ընթերցասիրաց ընկերութեան՝ մի քանի հազար անկազմ—փառակազմ, բազմալեզու, անհամ-անհոտ, ոչ ընթերցանելի գրքեր. մէկ բողոքագիր մատուցանելու ընթերցասէրներին՝ ընթերցարան չը յաճախելու համար:

—

Երաժշտասիրաց ընկերութեան՝ աւելի խանգարուած երաժշտական գործիքներ, տգէտ դասատուներ, եւ ականջներ նրանց լսելու:

—

Թատերասիրաց ընկերութեան եթէ վերակազմուի........ (ընծան պահում ենք առայժմ մեզ մօտ մինչեւ վերակազմուելը):

—

*) Կերակուր ինչ հայկական, ի մէջ որոյ հարեալ (գաղանակօր կամ այլ իւիք) հալեն միսք եւ ոսկրք: (Տես, «Շաւիղ» № 45, լուրերի բաժնում,) բստ այլոց ոմանց եւ ոսկիք: